

բունի կամ վարձքով՝ հայթայթեցին հարկ եղած արհեստագէտները նուաճող տարրերուն հանդիստին կամ ճոխութեան համար: Մինչ Քրիստոսէ շատ դարեր առաջ Հայաստանի (Ուրարտուի) թէ՛ ներկերը, մասնաւորապէս որդան, եւ թէ՛ հիւսուածեղէնները համբաււոր էին:

637ին, երբ Արարները Պարսից Տիգրոն մայրաքաղաքը դրաւեցին՝ աւարին մէջ ձեռք բերին նաեւ մեծարժէք ու փառաւոր զորդ մըն ալ, ոսկեթիւ, զոհարագարդ: Նոյն ատեն ոչ մէկ վիպաւթիւն հասած է մեղի ցոյց տալու համար որ այդ զորդը «Գարուն Խոսրովի» կոչուած եւ Զ դարուն արդէն յիշուած ու գործածուած, պարսիկ արուեստագէտներու գործ էր:

Մինչեւ Ժ դար դալու ենք որպէսզի հանդիպինք Իսկն Հաուգալ Արար աշխարհադիրն Պարսկաստանի մէջ զորդ շինուելու վիպաւթեան: Հետաքրքրական է որ ուշիմ եւ յանդուգն Վենետիկցին, Մարքոյ Բոլոյ, որ երեցս այցելած է այս կողմերը, ոչ մէկ յիշատակութիւն ունի Պարսկաստանի մէջ զորդ շինուելու մասին, մինչ կը յիշէ ուրիշ ձեռագործներ: Նոյն ատեն՝ նոյն ուղեւորը հիացումով կը խօսի Գոնիայի, Կեսարիոյ եւ Սերաստիոյ մէջ 1275ական թուականներուն Հայոց հիւսած զորդերու մասին, որդանով ներկուած, որոնք, ըստ իրեն, աշխարհի լաւագոյններն էին: ԺԴ դարեան մեծահամբաւ Պարսիկ բանաստեղծ Հաֆիզը՝ անգամ մը զորդի մասին կը յիշէ, որ սակայն պարսկական զորդ մը չէ: Ան իր 142րդ բանաստեղծութեան մէջ գինիէն ալ աւելի արժէքաւոր կը նկատէ ո՛չ թէ Պարսկաստանի՝ այլ Թուրքեստանի (Պուխարայի) զորդերը:

Այո՛, աղօթելու զորդ մը շինուած Թուրքեստան,
Ամենակատարեալ զոյներով եւ զծագրութեամբ:

Ինչպէս վերը ակնարկեցի, կ'ակնկալուէր որ պարսիկ բանաստեղծը Պարսկաստան շինուած զորդերու մասին խօսէր փոխանակ Թուրքեստանի զորդերուն, անշուշտ եթէ այն ատեն պարսկական զորդերը Թուրքեստանի չափ համբաւեալ ըլլային: Արդ, որոշ է որ պարսկական զորդերէն աւելի յարգի էին Թուրքեստանի զորդերը, որոնք ուրիշ բան չէին՝ եթէ ոչ «Պուխարա» կոչուած Պուխարայի զորդերը: Պարսիկ անանուն աշխարհադիր մը 982ին գրած իր Հուտուտ Ալ-Ալամ երկին մէջ կը վկայէ որ այն ատեն իսկ Պուխարայի եւ անոր մերձաւոր ուրիշ քաղաքի մը զորդերը, լաւ, բուրդէ շինուած կ'արտադրէին, ինչպէս նաեւ կապերտներ: Իսկ Զադանիայի մէջ «բալաս» կոչուած զորդեր, որոնք անտարակոյս դեռ մեղի ծանօթ «բալաս»ն է, անխաւ, ցփսի⁽²⁸⁾: Ան կը վկայէ նոյն ատեն՝ որ Պարսկաստանի մէջ կը շինուէին մեծ ու փոքր զորդեր, զիւրու-զորդեր եւ կապերտներ «աղնիւ որակէ»:

(28) Լոնտոն, 1937, էջ 112: